



## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«28» Հուլիսի 2023թ.

### ՀՐԱՄԱՆ N 602-ՂԻ

«ՎԻՋ ԷՅՐ ԱՐՈՒ ԴԱՔԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Արու-Դաքի» ավիաընկերության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի հայտը.

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Արու Դաքի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Արու Դաքի/OMAA/-Երևան/UDYZ/-Արու Դաքի/OMAA/ երթուղով՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2024 թվականի հունվարի 14-ը և 2024 թվականի հունվարի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և 2024 թվականի հունվարի 15-ից մինչև 2024 թվականի հունվարի 28-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մարտի 25-ի N 126-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023/2024 թվականների ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի դեկտեմբերի 7-ից մինչև 2024 թվականի հունվարի 14-ը և 2024 թվականի հունվարի 29-ից մինչև 2024 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ և 2024 թվականի հունվարի 15-ից մինչև 2024 թվականի հունվարի 28-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի մարտի 25-ի N 126-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

11/28/2023

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 160/2023

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՄ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ  
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 160/2023  
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR  
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը  
Aircraft Operator

«Վիզզ Էյյր Աբու-Դաբի» ՍՊԸ  
"Wizz Air Abu Dhabi" LLC

Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)  
Type(s) of aircraft(s)

A321

07/12/2023–14/01/2024 և 29/01/2024–28/03/2024՝  
շաբաթական 2 չվերթ  
07/12/2023–14/01/2024 և 29/01/2024–28/03/2024 - 2  
flights per week

Հաճախականությունը  
Frequency

15/01/2024–28/01/2024՝ շաբաթական 1 չվերթ  
15/01/2024–28/01/2024 - 1 flight per week

Երթուղին  
Air route

Աբու-Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու-Դաբի/OMAA/  
Abu Dhabi/OMAA/-Yerevan/UDYZ/-Abu Dhabi/OMAA/

Թույլտվության գործողության ժամկետը  
Permission validity

07/12/2023 մինչև 28/03/2024  
07/12/2023 till 28/03/2024

11/28/2023

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ  
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
CHAIR OF CIVIL  
AVIATION COMMITTEE  
MIHRAN KHACHATRYAN

X

Միջուկային ստորագրություն

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266



28.11.2023

(տալու ամսաթիվը)  
(date of issue)